ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՏՆՕՐԵՆ

ք. Երևան 0051 Կոմիտասի պող. 49/4 Հեռ.՝ (37410) 23-71-34 Էլ. փոստ՝ info@nih.am

№ 01-917/3
«25» օգոստոս 2022թ

«ՆՈՐ ՎԱՆ ՇԻՆ» ՍՊ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ Ս. ԱՍԼԻԿՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՆՈՐ ՎԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 01.06.2022 թվականին կնքված «ՀՀ ԱՆ ԱԱԻ-ԳՀԱՇՁԲ-22/1» ծածկագրով գնման պայմանագրի 1,1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ընթացիկ վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է 45 օրացուցային օր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ ոչ պատշաճ (աշխատանքների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծել:

Կապալառուն պատշաճ չի կատարել պայմանագրի №2-րդ չափաբաժնով նախատեսված աշխատանքները, խախտել է սահմանված ժամկետը՝ օրացուցային գրաֆիկը: Պատվիրատուն ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, մասամբ միակողմանի

լուծում է պայմանագիրը՝ 2- րդ չափաբաժնի մասով համարելով այն լուծված 1 755 205 ՀՀ դրամ գումարի չափով:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի ա կետի համաձայն՝ անձը գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվում է, եթե «խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի որակավորման ապահովման գումարը):

Կապալառուի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրային ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 4,2 և հավելված 5,1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին հմաձայնագրերով սահմանված գումարներից համապատասխանաբար 374 647 ՀՀ դրամ և 249 764 ՀՀ դրամ ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի Հայէկոնոմբանկի 163058101441 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Տվյալ դրույթը հաշվի առնելով, առաջարկում ենք սույն ծանուցումը ստանալուց հետո 3(երեք) աշխատանքային օրվա ընթացքում վճարել վերը նշված որակավորման և պայմանագրային ապահովումների գումարները, հակառակ դեպքում Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, Ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱՋԱՐՉՅԱՆ

Կատարող՝
Գնումների համակարգող Նաիրա Ղուբասարյան
Հեռ. 010 23 53 50